## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**28 ՄԱՐՏԻ 2014թ.**

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 17-ի N36-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Կապանի քաղաքապետարանում իրականացվեց վարչական հսկողություն հետևյալ բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, ուտիկանություն, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, կրթություն, առևտուր և ծառայություններ, սոցիալական պաշտպանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

---

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Կապան քաղաքային համայնքի ղեկավարին:

**ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝** **Ս. Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի կապան քաղաքային համայնքի ղեկավար՝** **Ա. Հայրապետյան**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ
28-03-2014թ. N1 արձանագրության

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

## Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Համայնքի ավագանու կողմից ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան ընդունված իր կանոնակարգի առկայություն | X | Թերի է պահպանված | X | Հաստատված է համայնքի ավագանու 2012-12-03 N81-Ա որոշմամբ: Կանոնակարգը պետք է հաստատված լիներ նորմատիվ իրավական ակտով, որը չի կատարվել: Կանոնակարգը հաստատող որոշման մեջ ուժը կորցրած չի ճանաչվել 2008-12-02 N36-Ն որոշումը: | Առաջարկվում է հաստատել նոր կանոնակարգ և ուժը կորցրած ճանաչել նախկին՝ 2008-12-02 N36-Ն և 2012-12-03 N81-Ա որոշումները: | Եռամսյա ժամկետում |
| Համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի զարգացման ծրագրի առկայություն | X | Թերի է պահպանված | X | Հաստատված է համայնքի ավագանու 2012- | Առաջարկվում է քառամյա զարգացման ծրագիրը հաստատել | Եռամսյա ժամկետում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 12-28 N106-Ն որոշմամբ: 2013-12-25 N34-Ն որոշմամբ համայնքի զարգացման ծրագիրը խմբագրված է և նոր որոշմամբ աղյուսակի ձևով հաստատված է միջոցառումների ցանկ, ինչպես նաև հաստատված է համայնքի 2014 թվականի զարգացման ծրագիր, որը "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքով սահմանված պահանջ չէ: | օրենքով սահմանված կարգով: | |
| Համայնքի ավագանու կողմից հաստատված բյուջեի կատարման տարեկան հաշվետվության առկայություն | X | Թերի է պահպանված | X | 2012 և 2013թթ. տարեկան հաշվետվությունները հաստատված են համապատասխանաբար համայնքի ավագանու 2013-03-20 N4-Ա և 2014-02-20 N2-Ա որոշումներով: Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատվում է որպես նորմատիվ իրավական ակտ, | Առաջարկվում է որոշումները համապատասխանեցնել օրենսդրության պահանջներին | Եռամսյա ժամկետում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | սակայն Կապան քաղաքային համայնքի դեպքում 2012 և 2013թթ. համար որպես անհատական ակտ է հաստատված և չի ներկայացված ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 2012թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատված է օրենքով սահմանված ժամկետի ուշացումով: | | |
| Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված պահանջը | Առաջարկվում է ընդունել համապասխան իրավական ակտեր | Եռամսյա ժամկետում |
| Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 33-րդ կետով սահմանված պահանջը | Առաջարկվում է ընդունել համապատասխան որոշում | Եռամսյա ժամկետում |
| Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական | Առաջարկվում է ընդունել | Եռամսյա ժամկետում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն | | | | ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 34-րդ կետով սահմանված պահանջը | համապատասխան որոշում | |
| Համայնքի ավագանու նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում ՏԻՄ օրենքի պահանջների պահպանման առկայություն | X | Թերի են պահպանված | X | Ավագանու անդամները գրավոր չեն տեղեկացվում, գրավոր ծանուցումների մասին նյութեր չկան: Տեղեկացումը կատարվում է բանավոր կամ հեռախոսով հայտնելու միջոցով: Խախտվել են "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները | Առաջարկվում է այսուհետ ապահովել ավագանու անդամների պատշաճ ծանուցումը | Անմիջապես |
| Համայնքի ավագանու անդամի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով որևէ մշտական հանձնաժողովի անդամակցությունը և դրա նիստերին մասնակցությունը: | X | Թերի է պահպանված | X | Առկա է, սակայն հանձնաժողովի նիստերի արձանագրություններ չկան | Առաջարկվում է այսուհետ ապահովել հանձնաժողովների բնականոն աշխատանքը | |

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| Համայնքի ղեկավարի | X | Թերի է | X | Համայնքի | Առաջարկվում է | Երկամսյա ժամկետում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անհատական ակտերի ընդունումից հետո օրենքով սահմանված երկօրյա ժամկետում ուղարկելու ավագանու անդամներին ուղարկված լինելու, ինչպես նաև համայնքի ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի վայրում համայնքի ղեկավարի անհատական ակտերի փակցված լինելու առկայություն: | | պահպանված | | ղեկավարի ոչ բոլոր անհատական ակտերի մասին է կատարվում ծանուցում: Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 1[1] կետի պահանջը | ապահովել համայնքի ղեկավարի իրավական անհատական ակտերի պատշաճ ծանուցումը ավագանու անդամներին | |
| Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն: | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 10,1-րդ կետով սահմանված պահանջը | Առաջարկվում է հանդես գալ համապատասխան առաջարկությամբ | Երկամսյա ժամկետում |
| Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն: | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 10,2-րդ կետով սահմանված պահանջը | Առաջարկվում է հանդես գալ համապատասխան առաջարկությամբ | Երկամսյա ժամկետում |

## Արտակարգ իրավիճակների բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| Տարահանված բնակչության կենսաապահովում. Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլան | X | Թերի է պահպանված | X | Հաշվի չեն առնված օրենսդրության պահանջները | Առաջարկվում է լրամշակել տարահանված բնակչության կենսաապահովման պլանը՝ այն համապատասխանեցնել օրենսդրության պահանջներին | Երկամսյա ժամկետում |
| Բնակչության պատսպարման իրականացում. Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարման համար նախապես մշակված և հաստատված ամրագրման պլան, պաշտպանական կառույցներով չապահովված բնակչությանը պատսպարելու նպատակով՝ պարզագույն թաքստոցների կառուցման համար համայնքի ղեկավարի կողմից հաստատված պլան | X | Թերի է պահպանված | X | Հաշվի չեն առնված ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N824-Ն որոշմամբ հաստատված նվազագույն կենսաապահովման նորմատիվները | Առաջարկվում է լրամշակել բնակչության պատսպարման պլանը, ճշտել հաշվարկները և այն համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության պահանջներին | Երկամսյա ժամկետում |
| Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան | X | Թերի է պահպանված | X | Հաշվի չեն առնված ՀՀ կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 28-ի N592 որոշման պահանջները | Առաջարկվում է լրամշակել պլանը, համաձայնեցնել և համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության պահանջներին | Երկամսյա ժամկետում |